կան դարուն վերաբերող գրուածի մը ամբողջանալն, սուրբ Արիստիդէս աթենացւոյն ջատագովութեան ։

Այս գիտնական և քննադատական գիւտողութիւններն՝ ուսումնական հանդիսի մը մէջ հրատարակեց Գերապ. վարդապետն Պօնար՝ Օրլէանու պատուեալ կանոնիկոսն, Լիլ քաղաքին ուղղափառ համալսարանին ուսուցիչ, վարդապետ աստուածաբանութեան և միանգամայն գեղեցիկ դպրութեանց. զոր համազգային գիտնական և բանասէր եկեղեցականաց և աշխարհականաց մեծ հաճութիւն պատճառելու յուսով՝ ուզեցինք հրատարակել 'ի Բազմավիպիս հայ բարբառով ։ Ուրիշ քանի մը քննադատք ալ, նաև 'ի Նորաղանդից, խօսեցան և գրեցին այս նիւթոյս վրայ 'ի նպաստ և հակառակ կարծեաց հրատարակողաց և հատուածոյն վաւերականութեան, զոր պիտի տեսնենք ։

Գալով հայ թարգմանութեան, որ սքանչելին է յիւրում սեռին, տեղեկութեան և քննադատական բան մը չենք կրնար աւելցընել, արդէն յառաջաբանին մէջ բաւականն ըսուած է. բայց բառք, բացատրութիւնք, դարձուածք բանից, ողորկութիւն և յստակութիւն աննման, և ամենայն ինչ որ ընտիր մատենագրական լեզու կը կազմեն՝ յայտնապէս կը վկայեն թէ Ծննդոց գրոց թարգմանչին ձեռք մը կայ, Ս. Սահակայ և մեսրոպեան կիրթ ճաշակն, մեղմ և ճկուն գրիչն կը խօսի. շատ է անգամ մը կարդալ այս բոլոր ըսածնիս լիովին իմանալու համար ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Իննևտասներորդ դարու քննադատութիւնն իր այնչափ բարեմասնութեանց հետ բազմագոյն ալ վրիպանքներ ունի, որ շատ կ'աղօտացընեն իր ստոյգ փառքն և երբեմն թերևս կ'ոչընչացնեն ալ ։ Այս վրիպանաց մեծագոյնն է ազգային պատմութեանց մէջ և պատմագրաց վրայ միշտ անընտրող հայրենասիրութիւն մը նկատել, և ազգային համաձայն բանական լուսէն՝ քննադատն իր բանին լոյսը աւելի պայծառ և ընտրող համարելով՝ անձամբ դատաւոր նստիլ ոչ միայն պատմագրական դիպաց առ մեզ հասեալ ներկայ վիճակին, այլ հազարաւոր ամաց մարդկութեան խղճին ու մտաց ալ. այս՝ եղեռն է անքաւելի քննադատական արուեստին մէջ ։

Այս յոխորտ ազատութիւնն և ուրիշ այլ կարևոր պատճառք՝ կը ստիպեն զմեզ կուդշմիտ գերմանացւոյն Ագաթանգեղոսի վրայ ըրած քննադատութիւնն դադրեցնել 'ի Բազմավիպիս. վասն զի ընթերցողն հատուած հատուած կարդալով՝ քննադատին ամբողջական ուղղութիւնն կամ խոտորութիւնը չի կրնար ճշդիւ ըմբռնել. թերևս բազմաց ալ հայրենասէր սրտին ցաւ բերէ կամ յանդգնութիւն երևնայ քննադատին ամեն կարծիքը լռութեամբ միայն դատապարտել կամ ընդունիլ. ուստի լաւ համարեցանք առանձին ուսումնաթերթիւ հրատարակել ամբողջովին յուսումն սիրաբանից և 'ի խուզարկութիւն քննասիրաց ։

digitised by A.R.A.R.@